Տարածվում է անվճար

- **«Ձայն» վերլուծական տեղեկատվական լրատու**

  Նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների շուրջ հասարակության իրազեկության աստիճանը,

- **Լուսաբանել**

  իրականացվող հանրային քաղաքականությունները և հիմքեր ստեղծել դրանց հասարակական մոնիտորինգի և մասնակցության համար:

- **Ձայնը հրատարակվում է «Օքսֆամ»**

  բրիտանական կազմակերպության Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բյուջետային վերլուծությունների» ծրագրի շրջանակներում:

- **Ծրագիրն իրականացնում է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն**

  ոչ-առևտրային, ոչ-քաղաքական կազմակերպությունը:




♦ ՀԱՄԱՐ 13 ♦ ՄԱՐՏ, 2006

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

# Նպաստները և կենսաթոշակները Հայաստանում

## Ի՞նչ նպատակ են հետապնդում սոցիալական ապահովության և ապահովագրության պետական ծրագրերը

Սոցիալական ապահովագրության և ապահովության ոլորտում իրականացվող պետական ծրագրերի նպատակները և այդ նպատակներին հասնելու միջոցները սահմանվում են պետական ռազմավարական ծրագրերով, ինչպես նաև մի շարք օրենքներով և որոշումներով: Այդ փաստաթղթերից մեկն է «ՀՀ 2006-2008 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը», որով սահմանված է, թե նշված տարիներին սոցիալական ապահովագրության և ապահովության ոլորտին հատկացված ֆինանսական միջոցները ինչ առաջնահերթությամբ պետք է ծախսվեն: Առաջնահերթությունների և գերակայությունների մեջ են մտնում աղքատության ընտանեկան նպաստները, սոցիալական կենսաթոշակները, հղիության և ծննդաբերության նպաստները: Պետությունը որոշ քայլեր է ձեռնարկում սոցիալական աջակցության և աղքատության նվազեցման ուղղությամբ, որի ապացույցն այն, որ վերջին տարիներին գումարային առումով աճել են վճարվող կենսաթոշակների և նպաստների մակարդակները, դրանք դարձել են ավելի հասցեական և արդյունավետ, ինչպես նաև ավելացել են նպաստների և կենսաթոշակների նոր տեսակներ: Թեև վճարվող նպաստների և կենսաթոշակների չափերը բավարար չեն գնահատվում, այնուամենայնիվ հարկավոր է տեղեկացված լինել դրանցից հնարավորինս արդյունավետ օգտվելու համար, ուստի «Ձայն» պարբերականի սույն համարում ներկայացնում ենք Հայաստանում տրվող կենսաթոշակների և նպաստների համակարգը:

## ՀՀ կենսաթոշակային համակարգը

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում սահմանված է.

«Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգն ընդգրկում է`

- պետական (պարտադիր) կենսաթոշակային ապահովագրությունը, որը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներից ձևավորվող բյուջեի միջոցների հաշվին երաշխավորում է քաղաքացիների կենսաթոշակային սոցիալական ապահովության իրականացումը կենսաթոշակային տարիքը լրանալու, հաշմանդամության, կերակրողին կորցնելու և օրենքով սահմանված այլ դեպքերում.
- պետական կենսաթոշակային ապահովությունը, որը պետական բյուջեի միջոցների հաշվին երաշխավորում է պետական կենսաթոշակային ապահովագրության համակարգում չընդգրկված քաղաքացիների կենսաթոշակային սոցիալական ապահովության իրականացումը ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու և օրենքով սահմանված այլ դեպքերում.
- կամավոր կենսաթոշակային ապահովագրությունը, որը գործատուների ու քաղաքացիների կամավոր վճարների և դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին օրենքով սահմանված կարգով երաշխավորում է ապահովագրված անձանց լրացուցիչ սոցիալական ապահովության իրականացումը:»

## Ի՞նչ կենսաթոշակներ կան Հայաստանում

Հայաստանում կենսաթոշակները բաժանվում են 2 հիմնական խմբերի` սոցիալական և ապահովագրական: Այդ 2 խմբերն իրենց հերթին բաղկացած են կենսաթոշակների հետևյալ տեսակներից.

**1. ապահովագրական կենսաթոշակներ**

- տարիքային,
- արտոնյալ պայմաններով,
- երկարամյա ծառայության,
- հաշմանդամության,
- կերակրողին կորցնելու դեպքում,
- մասնակի:

**2. Սոցիալական կենսաթոշակներ**

- ծերության,
- հաշմանդամության,
- կերակրողին կորցնելու դեպքում:

Սոցիալական կենսաթոշակներ ստանում են այն անձինք, ովքեր «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքին համապատասխան իրավասու չեն ստանալ ապահովագրական կենսաթոշակ:

Այստեղ հարկավոր է առանձնացնել սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն հասկացությունները:

Սոցիալական ապահովությունն այն է, երբ պետությունը հոգ է տանում սոցիալապես անապահով խմբերի, հաշմանդամների և երեխաների համար, վճարելով սոցիալական կենսաթոշակներ, նպաստներ և այլն:

Սոցիալական ապահովագրությունը դա համակարգ է (Հայաստանի դեպքում պետական), որի միջոցով պետությունը հարկադրում է աշխատողներին և գործատուներին պարբերաբար կատարել սոցիալական ապահովագրության պարտադիր վճարումներ, որոնցից գոյացած գումարներն էլ հատկացվում են կենսաթոշակների վճարմանը: Ներկայումս գործող համակարգը հիմնված է սերունդների համերաշխության սկզբունքի վրա, ըստ որի մեր պապերը վճարել են իրենց պապերի կենսաթոշակը, մենք էլ վճարում ենք մեր պապերի կենսաթոշակը: Սակայն Հայաստանում սերունդների համերաշխությունից անցում է կատարվում սոցիալական ապահովագրության անհատական կուտակային համակարգին: Անհատական կուտակային համակարգի դեպքում յուրաքանչյուր աշխատողի վճարած սոցիալական ապահովագրության վճարները ետ կտրվեն նրան ապահովագրական կենսաթոշակի տեսքով: Այսինքն յուրաքանչյուր ոք կստանա այնքան կենսաթոշակ, որքանով որ վերջինս ապահովագրել է իր ծերությունը Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամում:

## Ի՞նչ է ապահովագրական կենսաթոշակը կամ կենսաթոշակային ապահովագրությունը

Փաստորեն ապահովագրական կենսաթոշակ ստանալու համար այսօրվա աշխատողները պետք է կատարեն խնայողություններ` փոխանցելով դրանք Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ, իսկ հիմնադրամը, հաշվի առնելով ապահովագրական ստաժը, ինչպես նաև այլ չափանիշներ, կհաշվի և կվճարի յուրաքանչյուրի կենսաթոշակը: Օրինակ դիտարկենք տարիքային կենսաթոշակը: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի, 12-րդ հոդվածում գրված է.

«Տարիքային կենսաթոշակի իրավունք ունի 63 տարին լրացած անձը` 25 տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում:»

Ուշադրություն դարձնենք, որ օրենքում նշված է ոչ թե 25 տարի աշխատելը այլ 25 տարվա ապահովագրական ստաժը: Ի՞նչ է նշանակում ապահովագրական ստաժ: Ապահովագրական ստաժը գոյանում է, երբ աշխատողի աշխատանքի դիմաց աշխատողը կամ գործատուն սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ կատարում է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ: Հայաստանում ստվերային տնտեսության ներկայիս ծավալները, իհարկե, մտորելու առիթ պետք է տան մեր աշխատողներին: Քանի որ, եթե գործատուն աշխատողին աշխատանքի է ընդունում առանց կնքելու որևէ աշխատանքային պայմանագիր, թաքցնելով իր շրջանառության ծավալները, և՛ նա, և՛ աշխատողը չեն կատարում պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ և չեն գոյացնում ապահովագրական կենսաթոշակի համար անհրաժեշտ ապահովագրական ստաժի տարիները: Արդյունքում նման աշխատողը, հասնելով կենսաթոշակային տարիքի կամ կորցնելով աշխատունակությունը, կարող է զրկվել ապահովագրական կենսաթոշակից: Իհարկե պետությունն էլի հոգ կտանի հասարակության այդ անդամներին` նրանց տրամադրելով սոցիալական կենսաթոշակ կամ նպաստ, սակայն այդ գումարը զգալիորեն կզիջի այն գումարին, որը հնարավոր կլիներ ստանալ ապահովագրական կենսաթոշակ ստանալու դեպքում:

## Ինչպե՞ս է հաշվարկվում ապահովագրական կենսաթոշակը

Կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

**Կ=Հ+(nXԱ)XԳ + Վ/Տ**, որտեղ`

- **Կ**-ն կենսաթոշակի ամսական գումարն է,
- **Հ**-ն հիմնական կենսաթոշակի չափը,
- **n**-ը` ապահովագրական ստաժի տարիները,
- **Ա**-ն` մինչև անձնավորված հաշվառման ներդրումը ձեռք բերված ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը,
- **Գ**-ն` կենսաթոշակառուի անձնական գործակիցը,
- **Վ**-ն` անձնավորված հաշվառման ներդրումից հետո անհատական հաշիվներում արտացոլվող կենսաթոշակային ապահովագրության համար կատարված վճարումների ընդհանուր գումարի մասին տվյալը,
- **Տ**-ն` կենսաթոշակի անցնելու պահին կանանց և տղամարդկանց կյանքի

Շարունակությունը հաջորդ էջում

Սկիզբը նախորդ էջում

պատավելիք միջին տևողությունը՝ ամիսներով, որը յուրաքանչյուր տարի հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ելնելով պետական վիճակագրական տեղեկատվությունից:

Նշենք որ կառավարությունը 2006 թվականի հունվարի 1-ից հիմնական կենսաթոշակի չափը 4000 դրամից բարձրացրել է հասցնելով 4250 դրամի, իսկ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը 160-ից 180 դրամի:

## Ի՞նչ նպաստներ կան Հայաստանում

Պետական նպաստը սահմանվում է որպես պետական բյուջեի միջոցներից պարբերաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն: Ըստ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի՝ պետական նպաստների տրամադրման նպատակն է աղքատ ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը, ինչպես նաև ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի՝ (երեխայի ծննդյան) կամ մինչև 2 տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող անձի աշխատավարձի մասնակի հատուցումը: Նույն օրենքով սահմանվում են նաև նպաստների տեսակները և տրամադրման կարգը:

Պետական նպաստների տեսակներն են.

- ընտանեկան նպաստը (աղքատության ընտանեկան նպաստը),
- մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստը,
- երեխայի ծննդյան միանվագ նպաստը:

Միևնույն ժամանակ ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքներին տրամադրվում են հետևյալ միանվագ դրամական օգնությունները.

**1. միանվագ դրամական օգնություն՝**

- ընտանիքում երեխայի ծննդյան դեպքում
- ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում
- ընտանիքի անդամի մահվան դեպքում.

**2. հրատապ օգնություն անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում:**

## Ովքե՞ր և ո՞ր դեպքերում կարող են ստանալ պետական նպաստ:

### Ընտանեկան նպաստ

Որոշելու համար, թե ընտանիքը որքանով է անապահով պետությունը սահմանել է ընտանիքի անապահովության միավոր հասկացությունը՝ միաժամանակ սահմանելով անապահովության սահմանային այն միավորը, որից բարձր գտնվող ընտանիքներին տրամադրվում է ընտանեկան նպաստ: Ներկայումս այդ սահմանային միավորը 34 է, և այն ընտանիքները, որոնց անապահովության միավորը մեծ է 34-ից կարող են օգտվել ընտանեկան նպաստ համակարգից: Այդ դեպքում ընտանիքի յուրաքանչյուր անդամ ամսեկան ստանում է բազային 6000 դրամը և հավելավճար ընտանիքում առկա 18 տարին չլրացած անձանց համար ըստ հետևյալ սանդղակի՝

- 34.01-ից 38.00 անապահովության միավոր ունեցող ընտանիքների յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը կազմում է 3000 դրամ իսկ բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր՝ մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 3500 դրամ,
- 38.01-ից 41.00 անապահովության միավոր ունեցող ընտանիքների յուրաքանչյուր՝ մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը կազմում է 3500 դրամ իսկ բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր՝ մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 4000 դրամ,
- 41.01 և ավելի անապահովության միավոր ունեցող ընտանիքների յուրաքանչյուր՝ մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը կազմում է 4000 դրամ իսկ բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր՝ մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 4500 դրամ,

Անապահովության միավորների հաշվարկման ժամանակ օգտագործվում են 12 ցուցանիշներ՝ այդ թվում ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամտի, ընտանիքի կազմի, ընտանիքի յուրաքանչյուր անդամի զբաղվածության, սոցիալական վիճակի և այլ պայմաններ բնութագրող ցուցանիշներ:

Ընտանեկան նպաստ ստանալու համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը ընտանիքի մյուս չափահաս անդամների համաձայնությամբ դիմում է փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին՝ ներկայացնելով անհրաժեշտ տեղեկություններ ընտանիքի անապահովության միավորը հաշվարկելու համար:

### Միանվագ դրամական օգնություն

Ինչպես նշել էինք, ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքները իրավունք ունեն ստանալ նաև մի շարք միանվագ դրամական օգնություններ:

Եվ այսպես «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը նշում է.

«Երեխայի ծննդյան միանվագ օգնության իրավունք ունի այն ընտանիքը, որի անդամներից մեկն ունեցել է երեխա և ունի ընտանեկան նպաստի իրավունք, կամ երեխայի ծննդով այդ ընտանիքը ձեռք է բերել ընտանեկան նպաստի իրավունք»:

Երեխայի ծննդյան միանվագ դրամական օգնությունը ստանալու համար, ընտանիքի չափահաս անդամներից մեկը ծննդյան օրվանից 6 ամսվա ընթացքում դիմում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին: Նպաստը տրամադրվում է յուրաքանչյուր երեխայի ծննդյան դեպքում, իսկ նպաստի չափը կազմում է 35000 դրամ:

Նույն Օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է.

«Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ օգնության իրավունք ունի ընտանեկան նպաստի իրավունք ունեցող այն ընտանիքը, որի անչափահաս անդամներից մեկն ընդունվել է հանրակրթական ուսումնական հաստատության առաջին դասարան»:

Գործընթացը նույնն է՝ այսինքն չափահաս անդամներից մեկը հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում դիմում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին և իրավունք է ստանում առաջին դասարան ընդունվող յուրաքանչյուր երեխայի համար ստանալ 20000 դրամ միանվագ օգնություն:

Նշենք, որ համաձայն «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի, ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված անձինք իրավունք ունեն ստանալ նաև միանվագ դրամական օգնություն ընտանիքի անդամի մահվան դեպքում, ինչպես նաև հրատապ օգնություն անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու դեպքում, սակայն այս երկու դեպքերը դեռևս կանոնակարգված չեն, և 2006 թվականի բյուջեով նման դեպքերի համար հատկացումներ դեռևս չկան:

### Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի և երեխայի ծննդյան միանվագ նպաստներ

Եթե նախորդ 2 ենթաբաժիններում ներկայացված դրամական օգնությունները և նպաստը վերաբերվում էին միայն ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքներին և անձանց, ապա դրամական օգնության այս 2 տարբերակները վերաբերվում են ընտանեկան նպաստի իրավունք չունեցող ընտանիքներին:

Նպաստներից մեկը դա երեխայի ծննդյան միանվագ նպաստն է: Նպաստի իրավունքը ծագում է երեխայի ծննդյան կապակցությամբ, որի համար երեխայի ծնողներից մեկը կամ երեխայի որդեգրողը կամ խնամակալը ծննդյան օրվանից 12 ամսվա ընթացքում դիմում է բնակության վայրի սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմին: Նպաստի չափը 35000 դրամ է:

Երկրորդ տարբերակը մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստն է, որի իրավունքն ունի մինչև 2 տարեկան երեխայի խնամքի համար մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձը՝ ծնողներից մեկը կամ միակ ծնողը կամ խնամակալը կամ որդեգրողը: Նպաստը ստանալու համար հարկավոր է երեխայի ծնունդից հետո 12 ամսվա ընթացքում դիմել սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմին՝ ներկայացնելով պահանջվող փաստաթղթերը: Նպաստի չափը կազմում է 2300 դրամ: Նպաստի վճարումը դադարեցվում է հետևյալ դեպքերում.

- երեխայի 2 տարեկանը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից
- երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն (մանկատուն) տեղավորելու
- ծնողի աշխատանքի վերադառնալու
- ծնողի աշխատանքից ազատվելու
- երեխայի Հայաստանի Հանրապետությունից մեկնելու
- երեխայի մահվան դեպքերում՝ համապատասխան հանգամանքն առաջանալու ամսվան հաջորդող ամսվա մեկից:

## Որոշ վիճակագրություն

Սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության ոլորտի ծրագրերի համար անհրաժեշտ միջոցները գոյանում են 2 աղբյուրից՝ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի միջոցներից (այսինքն սոցիալական ապահովագրության պարտադիր վճարումներից) և ՀՀ պետական բյուջեի միջոցներից (այսինքն պետական բյուջե կատարված հարկային, մաքսային և այլ վճարումներից): Ապահովագրական կենսաթոշակները ֆինանսավորվում են սոցիալական ապահովագրության պարտադիր վճարումների հաշվին, իսկ սոցիալական կենսաթոշակները և նպաստները ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցների հաշվին:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներից մուտքերը 2006 թվականին կկազմեն 73.5 միլիարդ դրամ, որից 68.1 միլիարդը (կամ սոցիալական ապահովագրության վճարների 93 տոկոսը) կհատկացվեն ապահովագրական կենսաթոշակների վճարմանը, իսկ մնացած 5.5 միլիարդ դրամը կհատկացվի հիմնադրամին կենսաթոշակների վճարումները կազմակերպելու և սոցիալական ապահովագրության այլ ծրագրեր իրականացնելու համար: Սոցիալական ապահովագրության վճարները 2005 թվականի նկատմամբ 2006-ին կաճեն 12.4 տոկոսով կամ 8.1 միլիարդ դրամով, իսկ ապահովագրական կենսաթոշակները կաճեն 12.1 կամ 7.3 միլիարդ դրամով:

Սոցիալական կենսաթոշակների համար 2006 թվականի բյուջեն նախատեսել է 3.3 միլիարդ դրամ, որը 2005 թվականի նկատմամբ ավել է 632 միլիոն դրամով: Այս աճը պայմանավորված է կենսաթոշակի հիմնական չափի 250 դրամով բարձրացմամբ և հաշմանդամության կենսաթոշակի 850 դրամով բարձրացմամբ: Սոցիալական կենսաթոշակ ստացողների թվաքանակը գրեթե նույնն է: Եթե 2005 թվականին միջին ամսեկան կենսաթոշակը կազմել է 4867 դրամ, ապա 2006 այն կկազմի 6050 դրամ:

Պետական նպաստները 2006 թվականի բյուջեում կկազմեն 27 միլիարդ: Նպաստներ կստանան ընդհանուր առմամբ 181891 անձինք և ընտանիքներ: Պետական նպաստների 2005 թվականի բյուջեն կազմել էր 22.3 միլիարդ, իսկ նպաստառուների թվաքանակը՝ 188395 անձ և ընտանիք:

Աղքատության ընտանեկան նպաստի և աղքատ ընտանիքներին միանվագ դրամական օգնության ոլորտում 2006 թվականին կհատկացվի 24.4 միլիարդ դրամ, որը 4.3 միլիարդ դրամով ավել է քան 2005-ին էր: Նպաստառու ընտանիքների թվաքանակը կնվազի 6600 ընտանիքով: Հաճելի կլիներ մտածել, որ 6600 ընտանիք այլևս աղքատ չեն, հետևաբար և չեն ստանում ընտանեկան նպաստ: Նշենք, որ 2006 թվականին նախատեսվում է նպաստի իրավունք տվող անապահովության սահմանային միավորը իջեցնել 1-ով, որը հնարավորություն կտա ավելի շատ ընտանիքներ ներառել ընտանեկան նպաստի համակարգում: Միաժամանակ նախատեսվում է ընտանեկան նպաստի բազային չափը ավելացնել 1000 դրամով:

«Մինչև 2 տարեկան երեխա խնամող և մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրվող ամենամսյա նպաստ» ծրագրով նախատեսվում է 217.9 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2005 թվականի համեմատությամբ նվազել են 38.6 մլն դրամով (2005 թվականին կազմել էր 256.5 մլն դրամ), որը պայմանավորված է մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց թվի նվազմամբ՝ 1600 մարդ (2005 թվականին՝ 9400 մարդ, 2006 թվականին՝ 7800 մարդ):

«Հղիության և ծննդաբերության նպաստ» ծրագրով նախատեսվում է 1 միլիարդ դրամի չափով ծախս: Ծախսերը 2005 թվականի համեմատությամբ աճել են 439.2 մլն դրամով: Աճը պայմանավորված է հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող անձանց թվաքանակի՝ 468 մայրերի (2005 թվականին այս նպաստից օգտվել է 5495 մայր) և միջին օրական նպաստի 414.4 դրամի չափով (2005 թվականին միջին օրեկան նպաստը կազմել է 896.4 դրամ) կանխատեսվող ավելացմամբ:

«Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» ծրագրով նախատեսվում է 1.3 միլիարդ դրամի չափով ծախս: Նպաստ ստացող ընտանիքների թվաքանակը կանխատեսվել է 35728 ընտանիք: Ծախսերը 2005 թվականի համեմատությամբ աճել են 58.0 մլն դրամով: Աճը պայմանավորված է երեխաների ծննդի թվաքանակի աճով՝ 1228 ծնունդ:

ԶԱՅՆ

**Հիմնադիր և հրատարակիչ**
(լրատվական գործունեություն իրականացնող) «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 28-2,
Վկայական՝ 03 Ա 065178,
տրված՝ 28/06/04

**Հեղինակ**
Ակսել Թևոսյան

**Թողարկման պատասխանատու**
Գագիկ Թորոսյան

**Տպաքանակը**
6000 օրինակ:
Տարածվում է անվճար:

**Հասցե**
ՀՀ, ք. Երևան, Տպագրիչների 15-13
Հեռ./ֆաքս: (374 10) 540 289,
www.edrc.am
dzayn@edrc.am

Oxfam